Վահան Թոթովենց

Զքեզ ըմպեմ, ով աղջիկ

Ով հայուհի,
Ո՜վ ալեկոծ մերկություն…
Դո՛ւրս եկ խուցեդ և միգամած խորհուրդեդ,
Երթա՜նք դաշտերը ազատ,
Եվ ծծենք սիրտը ծաղկին:
Եկու՛ր, երթանք դեպի պարտեզը ծաղկած՝
Մենք հոն ըմպենք ժպիտները գարունին:

Ո՜վ Զարուհի,
Արևուհիդ շողափառ,
Եվ տարփանքով խելահեղ,
Եկո՛ւր, երթան՜ք անձրևին տակ ամառվան,
Դուն հոն ըմպե՛
Կարմիր հոգիս քերթողի:

Արյունի քույրս անմահ,
Իմ կուրծքիս տակ արևորեն սարսռագի՜ն
Եկո՛ւր, երթա՜նք դեպի Երազը ոսկյա,
Անձրևին տակ շողերու և ցողերու
Եվ թույլ տուր ինձ, որ ըմպեմ
Կաթող մեղրը բերանիդ:

Ո՜վ կույս հայկյան, երկյուղալից և դողդոջ,

Արեգնավետ ալյակ դու,
Եկո՛ւր, երթա՞նք դեպի ծործորն երազին,
Թույլ տուր լողա՞մ
Էության մեջ փրփրուն:

Ո՞վ գեղուհի,
Եկո՛ւր, երթա՞նք դեպի բլրակն հրաշքին,
Ընպե՞մ, ընպե՞մ լիաշուրթն
Քու աչքերուդ ընդմեջեն
Ջով սարսուռը բնության:

Ո՞վ արգավանդ կուսություն,
Եվ ճաճանչով ողողուն,
Թո՛ւյլ տուր գրկեմ իմ քնարի թևերով
Տրոփյունը քու լանջքին:

Ո՞վ հայուհի,
Հեծեծանքով ու տրտմությամբ դու սնած,
Եկո՛ւր, երթա՞նք վարդաստանը բուրավետ,
Դուն հոն փոխվե վարդերու զով հոգիին,
Թո՛ւյլ տուր ինծի, որ իբրև սյուք
Շրթունքներով քե՞զ հպիմ:

Եկո՛ւր, երթա՞նք դեպի Ակը արծաթյա՝
Ես հոն լեցնեմ իմ առնական ձեռքերով
Բաժակ մը ջուր լանջիդ վրա ջերմագին,
Եվ ներարկեմ իմ առնական ձեռքերով
Ջովությունը անմահական ջուրերուն
Քու տարփանքի հուրքերուդ:

Եկո՛ւր, երթա՞նք դեպ իրիկնամուտը շառայլ,
Իմ թևերուս մեջ հեծեծող դու անուրջ,
Վերափոխվե՛, հոն ճաճանչե՛ բոցերու,

Եվ ծարավի, ես ցամաքած ու տոչոր՝
Ջքեզ ըմպեմ… ո՞վ աղջիկ,
Իբրև վերջին փրփրոտ կոհակն արևին:

1917 թ.